ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 21.04.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 45/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոք) և կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (այսուհետ նաև՝ Կենտրոն) 18.04.2017թ. ներկայացված եզրակացությունը, պարզել է հետևյալը.

1. **<u>«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և պահանջը.</u>**

«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.04.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ 2017թ. մարտի 29-ին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագիրով բաց ընթացակարգով կազմակերպված և 10 չափաբաժնից բաղկացած մրցույթին:

Բողոքաբերը հայտնել է, որ թեև Ընկերությունը պատշաճ կերպով կատարել էր էլեկտրոնային գնումները կարգավորող իրավական նորմերը և պահպանել տեխնիկական պահանջները, Երևանի քաղաքապետարանից ստացել է 2017թ. մարտի 31-ին կազմված «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի» թիվ 2 արձանագրությունը, որի 2-րդ կետի համաձայն «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտը էլեկտրոնային համակարգ ոչ ճիշտ մուտքագրելու արդյունքում այն չի արտացոլվել համակարգում, բացակայում են բոլոր փաստաթղթերը, այդ թվում «ֆինանսական չափորոշիչ» բաժնում՝ գնային առաջարկները:

Համոզված լինելով, որ տեղի է ունեցել ծրագրային խափանում և համաձայն չլինելով գնահատող հանձնաժողովի ձևակերպման հետ, Ընկերությունը 2017թ. մարտի 31-ին դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ էլեկտրոնային կրիչով ներկայացված «ZIP tender» հայտը ուսումնասիրելու խնդրանքով:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով ՊՈԱԿ-ը հայտնել է, որ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագրով ընթացակարգին «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը չի բացվել՝ հայտերի նախապատրաստման գործիքի կողմից գեներացված կոդավորման «բանալիի» անվավերությաքն պատճառով:

Բողոքաբերը նշել է, որ Կենտրոնի կողմից ներկայացված պատասխանը վկայում է, որ գնահատող հանձնաժողովի 2017թ. մարտի 31-ին կազմված թիվ 2 արձանագրությունը և բաց ընթացակարգով հրապարակելու միջոցով պայմանագիր կնքելու մասին 2017թ. ապրիլի 6-ին կայացված որոշումը ենթակա են դադարեցման, քանի որ Ընկերության մեղքը էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտի չբացման հարցում բացակայում է, իսկ էլեկտրոնային համակարգի ծրագրային խափանումը չլինելու դեպքում մրցույթի չափաբաժինների մեծ մասով հաղթող կճանաչվեր «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն:

Ըստ Ընկերության՝ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 05.12.2013թ.-ի N 1370-Ն և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամների պահանջները, ՀՀ ֆինանսների նախարարի հրամաններով հաստատված էլեկտրոնային գնումներին վերաբերող ուղեցույցը և ձեռնարկը: Թեև Ընկերության հստակ և ճշգրիտ գործողությունները հաստատվել են համակարգից ստացված գեներացված և համարակալված ծանուցմամբ, խախտվել են Օրենքի 3-րդ, 5-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետեչով սահմանված կանոնները:

Բողոքաբերը նաև նշել է, որ ծրագրային խափանման դեպք է եղել նաև մինչև ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագրով կազմակերպված մրցույթը և նմանատիպ բողոքը բավարարվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից (Խորհրդի թիվ 31/17 որոշումը):

Ընկերությունը բողոքով պահանջում է Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետին համապատասխան կասեցնել գնահատող հանձնաժողովի 31.03.2017թ. թիվ 2 արձանագրության և բաց ընթացակարգով հրապարակելու միջոցով պայմանագիր կնքելու մասին 06.04.2017թ.-ին կայացված որոշման իրականացումը, ինչպես նաև Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետին համապատասխան դադարեցնել գնահատող հանձնաժողովի 31.03.2017թ. թիվ 3 արձանագրությունը և 06.04.2016թ. բաց ընթացակարգով հրապարակելու միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության և 06.04.2017թ.-ին կայացված որոշման պատճենները, Կենտրոնին հասցեագրված գրության և Կենտրոնի պատասխան գրության պատճենները, «armeps» համակարգի կողմից փաթեթի մուտքագրման հավաստման հաղորդագրությունը և Ընթացակարգին վերաբերող այլ փաստաթղթեր:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքի քննման շրջանակներում 13.04.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումը.</u>**

Կենտրոնը Պատվիրատուին ուղղված 10.04.2017թ. թիվ 01/04.1/1434-17 գրությամբ խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-45/17 ծածկագրով 13.04.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած բողոքը քննող հանձնաժողովի նիստին ՀՀ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը չի ապահովել իր մասնակցությունը, սակայն պատշաճ ծանուցված է եղել նիստի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ:

3. **<u>ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>**

Կենտրոնը Խորհրդին է ներկայացրել իր 18.04.2017թ. եզրակացությունն և առաջարկել է «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարել:

4. **<u>ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագրով բաց ընթացակարգ՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ ձեռքբերելու նպատակով:

2. ՀՀ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով («Armeps» համակարգ):

3. Համաձայն գնահատող հանձնաժողովի 30.03.2017թ. 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը էլեկտրոնային համակարգ ոչ ճիշտ մուտքագրելու արդյունքում չի արտացոլվել համակարգում, բացակայում են բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ «ֆինանսական չափորոշիչ» բաժնում՝ գնային առաջարկները:

4. Ընկերությունը 31.03.2017թ. գրությամբ դիմել է Կենտրոնին՝ հայտնելով, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից ս/թ փետրվարի 17-ին հայտարարված և ս/թ մարտի 30-ին ժամը 10:00-ին բացվող թիվ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագրով Ընթացակարգին, հայտը սահմանված կարգով բեռնվել է, որի մասին հավաստում է Ընկերության էլ. փոստին մուտքագրված հաղորդագրությունը, սակայն հայտի փաթեթը չի մուտքագրվել: Ընկերությունը խնդրել է տալ պարզաբանում վերոնշյալ հայտի փաթեթի վերաբերյալ:

5. Կենտրոնը 05.04.2017թ. թիվ 02/03.1/1369-17 գրությամբ հայտնել է, որ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագրով ընթացակարգին «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը չի բացվել, որովետև հայտերի նախապատրաստման գործիքի կողմից գեներացված կոդավորման «բանալին» անվավեր է:

6. ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի անունից, քննելով «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի 07.04.2017թ. բողոքով ներկայացված միջնորդությունը, 13.04.2017թ.-ին հրապարակել է Խորհրդի միջանկյալ որոշումը՝ միջնորդությունը բավարարելու և Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու գործընթացը կասեցնելու վերաբերյալ:

5. **<u>ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումներն և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն, ուսումնասիրելով «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2017թ. ներկայացված բողոքն և կից փաստաթղթերը, Ընկերության 31.03.2017թ. գրությունը, Կենտրոնի 05.04.2017թ. թիվ 02/03.1/1369-17 գրությունը և ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքը քննելու նպատակով 13.04.2017թ. ժամը 17:00-ին կայացաց նիստի արդյունքները և կից փաստաթղթերը, Կենտրոնի 18.04.2017թ. եզրակացությունը, գտնում է, որ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

ՀՀ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով («Armeps» համակարգ):

Համաձայն գնահատող հանձնաժողովի 30.03.2017թ. 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը

էլեկտրոնային համակարգ ոչ ճիշտ մուտքագրելու արդյունքում չի արտացոլվել համակարգում, բացակայում են բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ «ֆինանսական չափորոշիչ» բաժնում՝ գնային առաջարկները:

Ընկերությունը 31.03.2017թ. գրությամբ դիմել է Կենտրոնին՝ հայտնելով, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից ս/թ փետրվարի 17-ին հայտարարված և ս/թ մարտի 30-ին ժամը 10:00-ին բացվող թիվ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագրով Ընթացակարգին, հայտը սահմանված կարգով բեռնվել է, որի մասին հավաստում է Ընկերության էլ. փոստին մուտքագրված հաղորդագրությունը, սակայն հայտի փաթեթը չի մուտքագրվել: Ընկերությունը խնդրել է տալ պարզաբանում վերոնշյալ հայտի փաթեթի վերաբերյալ:

Կենտրոնը 05.04.2017թ. թիվ 02/03.1/1369-17 գրությամբ հայտնել է, որ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակաերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99 ծածկագրով ընթացակարգին «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի ***հայտը չի բացվել, որովետև հայտերի նախապատրաստման գործիքի կողմից գեներացված կոդավորման «բանալին» անվավեր է:***

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպության պատասխանի համաձայն՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը չի բացվել, որովետև հայտերի նախապատրաստման գործիքի կողմից գեներացված կոդավորման «բանալին» անվավեր է, այսինքն տեղի է ունեցել համակարգի խափանում, Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Ընկերության գնման գործընթացին մասնակցելու իրավունքը (մասնավորապես՝ հայտ ներկայացնելու իրավունքը) սահմանափակված է եղել և Ընկերությունը օբյեկտիվորեն զրկվել է Ընթացակարգին մասնակցելու իրավունքից, որի արդյունքում չեն պահպանվել Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝

ՈՐՈՇԵՑ

«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2017թ. ներկայացված ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքը բավարարել՝ դադարեցնել «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/99» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.03.2017թ. թիվ 2 արձանագրությունը և 06.04.2017թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԳԲԽ-45/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովի

անդամ **Արամ Գրիգորյան**

անդամ **Հասմիկ Մնացականյան**